Ժամկետային ավանդներ

Պլանավորեք Ձեր ապագան և վստահ
եղեք Ձեր խնայողությունների համար

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար:

Հրապարակման ամսաթիվ՝ նոյեմբեր, 2023
Ուժի մեջ է սկսած՝ նոյեմբեր, 2023

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Ժամկետային ավանդ

Բացեք ավանդներ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում և հետևեք, թե ինչպես են աճում Ձեր խնայողությունները:

Ժամկետային ավանդի տեսակները

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը (այսուհետ՝ Բանկ) առաջարկում է Ստանդարտ և Միջանկյալ տոկոսագումարով ժամկետային ավանդներ:

Ստանդարտ ժամկետային ավանդ	Միջանկյալ տոկոսագումարով ժամկետային ավանդ
Այս ավանդի դեպքում տոկոսագումարները վճարվում են ավանդի ժամկետի վերջում	Այս ավանդի դեպքում տոկոսագումարները վճարվում են ամսական կտրվածքով ավանդի ամբողջ ժամկետի ընթացքում

Ավանդի արժույթ

Բանկն ընդունում է ավանդներ հետևյալ արժույթներով՝

- ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար
- Եվրո

Ավանդի նվազագույն գումար

- ՀՀ դրամով ավանդի դեպքում՝ 100,000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ 500 ԱՄՆ դոլար/եվրո

Ավանդի նվազագույն ժամկետ

- 1 ամիս Ստանդարտ ժամկետային ավանդի համար
- 3 ամիս Միջանկյալ տոկոսագումարով ժամկետային ավանդի համար

Սույն տեղեկատվական ամփոփագրին զուգահեռ անհրաժեշտ է ծանոթանալ նաև Բանկի «Հաճախորդների բանկային հաշիվների սպասարկման, բանկային ավանդների տրամադրման, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման Հիմնական պայմաններ»-ին (ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար) (այսուհետ՝ Հիմնական պայմաններ):

Ժամկետային ավանդների տարեկան անվանական տոկոսադրույքներ*

Արժույթ	Ամիս							
	1	3	6	9	12	18	24	36
ՀՀ դրամ	3.00%	4.00%	5.00%	6.00%	7.00%	7.00%	7.50%	7.50%
ԱՄՆ դոլար	0.50%	1.00%	1.50%	2.00%	2.50%	2.50%	2.75%	2.75%
Եվրո	0.25%	0.50%	1.00%	1.25%	1.50%	1.50%	1.50%	1.75%

- ՀՀ դրամով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018թ.-ի մայիսի 29-ից:
- ԱՄՆ դոլարով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2023թ.-ի նոյեմբերի 1-ից:
- Եվրոյով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2023թ.-ի նոյեմբերի 1-ից:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ տոկոսագումարը ժամկետի վերջում վճարելու դեպքում

Արժույթ	Ամիս							
	1	3	6	9	12	18	24	36
ՀՀ դրամ	3.04%	4.07%	5.06%	6.04%	7.00%	6.88%	7.24%	7.00%
ԱՄՆ դոլար	0.50%	1.00%	1.51%	2.00%	2.50%	2.48%	2.71%	2.68%
Եվրո	0.25%	0.50%	1.00%	1.25%	1.50%	1.49%	1.49%	1.72%

* Ավանդի գումարը 250 միլիոն ՀՀ դրամը կամ համապատասխան արժույթի 500 հազար միավորը գերազանցելու դեպքում ավանդի տոկոսադրույքը սահմանվում է պայմանագրային կարգով՝ համաձայն Հիմնական պայմանների:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ տոկոսագումարի միջանկյալ (ամսական) վճարման դեպքում

Արժույթ	Ամիս						
	3	6	9	12	18	24	36
ՀՀ դրամ	4.07%	5.12%	6.17%	7.23%	7.23%	7.76%	7.76%
ԱՄՆ դոլար	1.00%	1.51%	2.02%	2.53%	2.53%	2.78%	2.78%
Եվրո	0.50%	1.00%	1.26%	1.51%	1.51%	1.51%	1.76%

- ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվը ենթադրում է արտարժութային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:
- Ժամկետային ավանդից ստացված տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Տոկոսագումարը հաշվեգրվում է ավանդի բացման ամսաթվից մինչև ավանդի վերջնաժամկետը (ավանդի վերջնաժամկետի օրը տոկոսագումար չի հաշվեգրվում):
- **Ուշադրություն՝ Ձեր հաշվին առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:**

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ 10-ՐԴ ԷՋՈՒՄ:

Ավանդի մարման եղանակներ

Ստանդարտ Ժամկետային ավանդ

Ավանդի մայր գումարի և տոկոսագումարի վերաներդրում

Մարումից հետո և՛ ավանդի մայր գումարը, և՛ տոկոսագումարները նորից կներդրվեն նոր ավանդի տեսքով՝ տվյալ պահի դրությամբ Բանկի գործող տոկոսադրույքով և պայմաններով՝ համաձայն Հիմնական պայմանների:

Ավանդի մայր գումարի վերաներդրում

Մարումից հետո ավանդի մայր գումարը նորից կներդրվի տվյալ պահի դրությամբ Բանկի գործող տոկոսադրույքով և պայմաններով՝ համաձայն Հիմնական պայմանների, իսկ տոկոսագումարը չի ներդրվի նոր ավանդի տեսքով և կփոխանցվի հաճախորդի հաշվին՝ ցպահանջ ավանդի պայմաններով:

Ավանդի մայր գումարի և տոկոսագումարի փոխանցում հաճախորդի հաշվին

Ավանդի մարումից հետո և՛ մայր գումարը, և՛ տոկոսագումարները չեն վերաներդրվի նոր ավանդի տեսքով և կփոխանցվեն հաճախորդի հաշվին՝ ցպահանջ ավանդների պայմաններով:

Ավանդի վաղաժամկետ դադարեցում

Հաճախորդի պահանջով կատարված ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում կվճարվի հաշվեգրված տոկոսագումարի մեկ հարյուրերորդականը:

Միջանկյալ տոկոսագումարով ավանդ

Ավանդի մայր գումարի վերաներդրում

Մարումից հետո ավանդի մայր գումարը նորից կներդրվի նոր ավանդի տեսքով՝ տվյալ պահի դրությամբ Բանկի գործող տոկոսադրույքով և պայմաններով՝ համաձայն Հիմնական պայմանների:

Ավանդի մայր գումարի փոխանցում հաճախորդի հաշվին

Ավանդի մարումից հետո ավանդի մայր գումարը չի վերաներդրվի նոր ավանդի տեսքով և կփոխանցվի հաճախորդի հաշվին՝ ցպահանջ ավանդների պայմաններով:

Ավանդի վաղաժամկետ դադարեցում

Նվազագույնը մեկ ամիս հետո ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում, ավանդի վճարվելիք տոկոսագումարը կվերահաշվարկվի գործող ժամկետային ավանդի մեկ ամսվա համար կիրառելի տոկոսադրույքով: Ավանդի ժամկետի ընթացքում հաճախորդին վճարված տոկոսագումարի և վերահաշվարկված տոկոսագումարի տարբերությունը ենթակա է նվազեցման ավանդի մայր գումարից:

Եթե հաճախորդն ավանդը դադարեցնում է ավանդի հաշվի բացման օրվանից մինչև մեկ ամիս ժամկետի ընթացքում, ապա վճարվում է դադարեցման պահին հաշվեգրված տոկոսագումարի մեկ հարյուրերորդականը:

Նշում

Ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից առաջարկվող տոկոսադրույքը կազմում է 0%:

Հաճախորդի պահանջով ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում հաճախորդին վճարվող տոկոսագումարի հաշվարկման ներկայացուցչական օրինակներ՝

Օրինակ 1. Մեկ տարով կնքված ստանդարտ ժամկետային ավանդի վաղաժամկետ դադարեցում՝ ավանդի բացման ամսաթվից 24 օր հետո

Ժամկետային ավանդի պայմանները

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	12 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	7%
Հաշվետու տարվա օրերի քանակ	365
Ժամկետային ավանդի փաստացի օրերի քանակ	24

Հաշվարկված տոկոսագումար 24 օրվա համար = 4602.74 ՀՀ դրամ

Հաշվարկված տոկոսագումարի մեկ հարյուրերորդական մասը = $\frac{4602.74}{100}$ = 46.03 ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ՝ 10% = 46.03 x 10% = 4.60

Վճարված զուտ տոկոսագումար = 46.03 – 4.60 = 41.42 ՀՀ դրամ

Օրինակ 2. Մեկ տարով կնքված միջանկյալ տոկոսագումարով ավանդի վաղաժամկետ դադարեցում՝ ավանդի բացման ամսաթվից երկու ամիս հետո

Ժամկետային ավանդի պայմանները

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	12 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	7%
Ավանդի վաղաժակետ դադարեցման պահին մեկ ամսվա համար գործող տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու օրերի քանակ	365
Ավանդի փաստացի օրերի քանակ	59

Հաշվարկված տոկոսագումար երկու ամսվա համար՝ 7% = 11,315.07 ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ՝ 10% = 11,698.63 x 10% = 1,131.51 ՀՀ դրամ

Վճարված զուտ տոկոսագումար երկու ամսվա համար = 11,315.07- 1,131.51 = 10,183.56 ՀՀ դրամ

Վերահաշվարկված տոկոսագումար 59 օրվա համար՝ 3% = 4,849.32 ՀՀ դրամ

Վերահաշվարկի արդյունքում տոկոսային եկամտից հարկ՝ 10% = 4,849.32 x 10% = 484.93 ՀՀ դրամ

Վերահաշվարկի արդյունքում վճարվելիք զուտ տոկոսագումար = 4,849.32 - 484.93 = 4,364.38 ՀՀ դրամ

Ավանդի մայր գումարից նվազեցվող գումար = 10,183.56 - 4,364.38 = 5,819.18 ՀՀ դրամ

Ինչպես դիմել

Կարող եք բացել ժամկետային ավանդ՝ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Օնլայն Բանկային ծառայության միջոցով:[1]

Այլ կարևոր տեղեկություններ

- **Հաշիվների բացման համար պահանջվող փաստաթղթերի ցանկին կարող եք ծանոթանալ hsbc.am կայքում:** Բանկն իր ներքին ընթացակարգերի համապատասխան իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
- Ժամկետային ավանդ ներդնելու ծառայությունը հասանելի է միայն Բանկի հաշվետեր հաճախորդներին:
- **Ավանդային հաշիվը բացվում է անվճար և չունի սպասարկման վճար ավանդի պայմանագրի գործողության ընթացքում:**
- Ժամկետային ավանդ բացելու պահին Բանկի կողմից հաստատված տոկոսադրույքը մնում է անփոփոխ ավանդային պայմանագրի ընթացքում: Ավանդի վերաներդրման դեպքում գործում են տվյալ պահի դրությամբ Բանկի գործող տոկոսադրույքներն ու պայմանները՝ համաձայն Հիմնական պայմանների:
- Ժամկետային ավանդի պայմանագրի ընթացքում տոկոսագումարի կապիտալացում չի իրականացվում:
- Ժամկետային ավանդները ենթակա են վերադարձման ավանդատուի առաջին իսկ պահանջով:
- Ավանդի ժամկետի ընթացքում ավանդի գումարի համալրում հնարավոր չէ իրականացնել՝ ներառյալ երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները:
- Ավանդային հաշիվների քաղվածքները տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
- **ՀՀ տարածքում ավանդի հաշվի քաղվածքների առաքման վճար չի կիրառվում:**
- Մինչև 6 ամսվա վաղեմություն ունեցող քաղվածքների կրկնօրինակների կամ ավանդի հաշվի պատմության վերաբերյալ տեղեկանքների համար վճար չի կիրառվում: **6 ամսից ավել վաղեմություն ունեցող քաղվածքների կրկնօրինակների կամ ավանդի հաշվի պատմության վերաբերյալ տեղեկանքների համար կիրառվում է 3,000 ՀՀ դրամ վճար՝ յուրաքանչյուր ամսվա կամ քաղվածքի համար:**
- Տոկոսագումարները կարող են վճարվել կամ ավանդի արժույթով կամ ՀՀ դրամով:
- **Երրորդ անձանց կողմից ժամկետային ավանդի բացումը հնարավոր է միայն մինչև 18 տարեկան երեխայի անունով, ընդ որում մինչև 18 տարեկան երեխայի հաշվի առկայությունը պարտադիր է:**
- Ավանդի հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:
- **Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:**

[1] Օնլայն բանկային ծառայությունների պայմաններին կարող եք ծանոթանալ Բանկի կայքում՝ hsbc.am

Ավանդների հատուցման երաշխավորող սահմանաչափեր

Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը գերազանցում է 7 միլիոն դրամը	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Վեճերի լուծման կարգը

Ժամկետային ավանդի պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

Եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 10 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք գումարն այլ արժույթով, վեճը կարող է լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Հաճախորդն իրավունք ունի սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների հետ կապված Բանկի նկատմամբ պահանջները օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Բանկը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե հաճախորդի կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, որը նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումները այն պահանջների գծով, որոնց գումարը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Տոկասագումարի հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Տոկոսագումարի հաշվարկն օրական կտրվածքով կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Մայր գումար x Տոկոսադրույք}}{\text{365 (կամ 366՝ նահանջ տարվա դեպքում)}}$$

Մայր գումարը տվյալ օրվա դրությամբ ժամկետային ավանդի մնացորդն է:

Տոկոսադրույքը տվյալ ավանդի և ժամկետի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքն է:

Օրինակ 3. Մեկ ամսով կնքված ստանդարտ ժամկետային ավանդի տոկոսագումարի և ավանդի վերջնական մնացորդի հաշվարկ

Ժամկետային ավանդի պայմաններ

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	1 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու տարվա օրերի քանակ	365
Ավանդի փաստացի օրերի քանակ	30

Հաշվարկված տոկոսագումար 30 օրվա համար = 2465.75 ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ՝ 10% = 2465.75 x 10% = 246.58 ՀՀ դրամ

Վճարված զուտ տոկոսագումար = 2465.75 – 246.58 = 2219.18 ՀՀ դրամ

Ավանդի վերջնական գումարն ավանդի ժամկետի վերջում (մայր գումար + զուտ տոկոսագումար) կազմում է 1,002,291.18 ՀՀ դրամ

Օրինակ 4. Տարեկան տոկոսային երկամտաբերության հաշվարկման բանաձև և ներկայացուցչական օրինակ

Ժամկետային ավանդի պայմաններ

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	1 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու տարվա օրերի քանակ	365
Ավանդի տեսակ	Ստանդարտ ժամկետային ավանդ

$APY = (1+r/n)^n-1$ որտեղ՝

APY – ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

r = 0.03 (3%), որն ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքն է

n = 12, որը կապիտալացումների քանակն է մեկ տարվա ընթացքում կապիտալացման հնարավորության դեպքում

$APY = (1+0.03/12)^{12}-1 = 3.04\%$

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ մատուցող խոշորագույն կազմակերպություններից մեկն է:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2023:
Բոլոր իրավունքները պահպանված են: